Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9
√84
470
471
472

1999

Գ
471

ՇԻԼԼԷՐ.

ԱՒԱԶԱԿՆԵՐ.

Գերմ. բնագրից առնի.

Ս. ԹԱՌԱՋԵԱՆՑ.

ԹԱԳՈՒՈՒ:
Տպարան Յ. Գ. Գիլքասարեանի.
1902.

Дозволено Цензурою 9 іюня 1901 г., Тифлисъ,

2ф-93

47-79

Գ
471

Բայց տես, թէ ինչպէս փառահեղ կերպով մայր է մտնում արևը... Այդպէս է մեռնում հերոսը... Երբ ես դեռ մանուկ էի, այդ էր իմ ձգտումը՝ արևի պէս ապրել և արևի պէս մեռնել... Տեսէք. ամեն բան կենդանանում է գարնանային մեղմ ճառագայթներից։ Ամենքը բաղդաւոր են... Ինձ համար միայն չկայ որդիական քաղցր անունը, սիրելիի քնքոյշ հայեացքը և բարեկամական գրկախառնութիւնը...

Խաչերի և սեղանների առաջ ծունր էք դնում, ծոմապահութեամբ տանջում էք ձեր մարմինը, և կարծում էք, թէ այդ միմոսութիւններով կը կուրացնէք Նրա աչքերը, որին դուք ինքներդ ամենագէտ էք անւանում...

I.

Կոմս Մոնբը երկու որդի ունի՝ Կարլ և Ֆրանց։ Կարլը թողնելով հայրենական ամրոցը, գնացել է Լայպցիկ ուսանելու, իսկ Ֆրանցը մնացել է տանը։ Կոմսի պալատում մնալ, մեծացել և ապրում է մի սիրուն, անմեղ աղջիկ՝ Ամալիա անունով։ Ահա այդ աղջիկը կուլուածաղիկ է դարձել երկու եղբայրների մէջ։ Կարլը և Ամալիան դեռ մանկական օրերից սիրումեն միմեանց բոլոր սրտով, որովհետև իրանց հոգեկան յատկութիւններով բոլորովին համապատասխանեն իրար։ Բայց Ֆրանցին դէպի աղջիկը մղում է ստոր-մարմնաւոր կիրքը։ Կարլի բացակայութիւնից օգտուելով Ֆրանցը գործ է դնում զանազան ստոր միջոցներ, որ Ամալիայի սիրտը գրաւէ։ Միւս կողմից նա աշխատում է, որ Կարլին վերջնականապէս դցէ ծերունի հօր աչքից և առ միշտ կտրէ նրա ոտքը հայրական ամրոցից։ Այդ չար մտադրութեան նպաստում է յետեւեալ հանգամանքը։

Կարլը, դեռ շատ ջահիլ լինելով, ուսանողական կեանքի մէջ թոյլ է տալիս իրան զանազան չափազանցութիւններ, որ շատ սովորական է գերմանական ուսանողների մէջ՝ խմել, մենամարտել, անհաշիւ փողեր միսել և սրա նման բաներ։ Այդպիսի կեանք է անցուցանում յանախ նոր սկսող ուսանողը։ Բայց սովորաբար ծնող-

ները ներում են դեռահաս ուսանողին և վճարում են նրա պարտքերը։ Կարլը արդէն բաւական պարտքեր ունէր, որի համար պարտապանները նեղացնում էին նրան։ Ծերունի կոմսը, ի հարկէ, կ՚օգնէր որդուն և ամեն բան կ՚ընդանար սովորական ճանապարհով, որովհետև, չնայելով չափազանցութիւններին, Կարլը ի բնէ մաքուր և բարեսիրտ անձնաւորութիւն էր։ Բայց Ֆրանցի խարդախ միտումներին ձեռնտու չէր, որ Կարլը նորից ուղիղ ընթացք ստանար։

Ֆրանցը մի սուտ նամակ է շարադրում, իբր թէ Լայպցիկից ստացած և կարդում է հօր ներկայութեամբ։ Նամակի մէջ Կարլի կեանքը նկարագրուած է սաստիկ սև գոյներով։ Նամակագիրը ի միջի այլոց յայտնում է, իբր ցաւօք սրտի, թէ Կարլը քառասուն հազար դուկատ պարտքի մէջ է ընկել, թէ նա անպատուել է մի հարուստ բանկիրի աղջիկ և մենամարտելով սպանել է իւր ախոյեանին, աղջկայ նշանածին, իբր թէ այդ բոլորի համար կառավարութիւնը որոնում է Կարլին, բայց նա մի խումբ երիտասարդներ ճանապարհից հանելով փախել-անյայտացել է։ Այժմ նրա գլուխը գնահատուած է և Մօրի անունը խայտառակուած։

Բայց Ծերունին չէ կարողանում դիմանալ այդ ծանր լուրերին, մանաւանդ երբ հարցը վերաբերում է իւր բարի անուան։ Եւ այդ բոլոր զրպարտութիւններին Ծերունի կոմսը հաւատում է, որովհետև Ֆրանցը իւր քայլերը անում է վերին աստիճանի նուրբ փարիսեցութեամբ և նենգաւոր խորամանկութեամբ։ Նամակը կարդալուց առաջ նա հարցնում է հօր առողջութիւնը և տրամադրութիւնը, իբր թէ դժւարանում է ցաւացնել հօր սիրտը, ստացած նամակը կարդալով։ Յետոյ իբր թէ չը կամենալով շարունակել նամակի ընթերցանութիւնը, պատռում է նրան, իսկապէս նպատակ ունենալով ծածկել նամակի կեղծ լինելը։

Բայց Ֆրանցը չէ բաւականանում նամակը կարդալով, այլ աշխատում է իւր դատողութիւններով լարել Ծերունուն որդոյ դէմ։

„Միթէ այդ բոլորը չէի զուշակում ես—ասում է Ֆրանցը հօրը—երբ նա դեռ երեխայ ժամանակ փողոցային տղաների հետ թափառում էր դաշտերում ու լեռների վրա, եկեղեցուց փախչում էր, որպէս յանցաւորը բանտից, և Ձեզանից ստացած կոպէկները տալիս էր առաջին պատահող մուրացկանին, մինչև մենք զրաղուած էինք աղօթքներով և քարոզագրքերի ընթերցանութեամբ։ Միթէ ես չէի զուշակում ապագան, երբ նա կարդում էր Յուլիանոս Կեսարի և Աղեքսանդր-մեծի հեթանոսական արկածները աւելի սիրով, քան Տօրիասի ապաշխարհական կրքերը։ Հարիւր անգամ ասել եմ, որ այդ մար-

դը մեզ ամենքիս գցելու է թշուառութեան ու խայտառակութեան մէջ։ Ոհ, երանի թէ նրա անունը Մօոր չլինէր։ Բայց դուք միշտ գովում էիք նրան։ Այդ կրակոտ հոգին—ասումէիք դուք—որը նրան այնպէս զգայուն է դարձնում դէպի վսեմ ու գեղեցիկ բաները, այդ պարզ սիրտը, որ արտացոլում է նրա աչքերի մէջ, զգացմունքների փափկութիւնը, որ յաճախ արտասուքի է հասցնում, այդ քաջարի բնաւորութիւնը, որ ստիպում է նրան բարձրանալ դարերը կաղնիների գլուխը, այդ անմեղ փառասիրութիւնը, այդ անյաղթելի կամքը և բոլոր այդ փայլուն յատկութիւնները մի ժամանակ առաջ կը բերեն մի հերոս, մի մեծ մարդ։ Դէհ, տեսէք այժմ, հայր. կրակոտ հոգին զօրեղացել է և փառահեղ պտուղներ է բերում։ Տեսէք, թէ անկեղծութիւնը որպիսի յանդգնութեան է փոխուել. Տեսէք, թէ հանճարեղ գլուխը որպիսի ծրագիրներով է զբաղուած։ Դուցէ, հայր, դուք դեռ բաղդ կունենաք տեսնելու նրան մի զօրքի գլխին, որը բանակ դնելով անտառներում, յոգնած ճանապարհորդի բեռը կիսով չափ կը թեթեւացնէ։ Դուցէ... Բայց... հայր, հայր, հայր... մի ուրիշ անուն դտէք Ձեզ համար"...

Ծերունին հաւատում է այդ բոլորին։ Բայց ինչ անէ. հայրական սիրտը այնուամենայնիւ չէ կարում որդուց։ Սակայն Ֆրանցը շատ խորամանկ է։ Նա բերում է այն փաստը, թէ շատ անգամ վատ մարդկանց ուղղում է նեղ դրութիւնը։ Ուրեմն եթէ Ծերունին խիստ վարուէ Կարլի հետ, զրկէ նրան իւր օգնութիւնից, հրամայէ երբէք չերևալ իւր աչքին, ապա կարելի է յուսալ, որ մի ժամանակ կը զղջայ նա։ Ծերունին աւելացնում է, թէ ինքը կը ներէ Կարլին, երբ նա անկեղծ զղջայ։ Բայց Ֆրանցը աւելորդ է համարում այդպիսի յուսադրութիւնը, քանի որ նա առանց այդ էլ կարող է և պարտաւոր է զղջալ։ Ինչ վերաբերում է Կարլին գրաւոր պատասխանելուն, Ֆրանցը խորամանկութեամբ թոյլատրութիւն է ստանում հօրից, որ ինքն գրէ նամակը, իբր թէ հայրը զայրացած լինելով, կարող է փոքր ինչ խիստ լեզու գործածել։ Իսկապէս Ֆրանցը բոլորովին հակառակն է մտածում։ Ծերունին միամտաբար յանձնում է Ֆրանցին՝ գրել և ուղարկել հարկաւոր նամակը և դուրս է գնում։

Ֆրանցը մէնակ մնալով, սկսում է զանազան կեղծ ու պատիր դատողութիւններով հանգստացնել իւր խիղճը, արդարացնել իւր վարմունքը։

„Ես իրաւունք ունեմ՝ ընութիւնից անբաւական լինելու"—ասում է նա ինքն իրան։ Ինչու ես առաջինեկը չեմ. ինչու ընութիւնը այդպիսի տգեղ կերպարանք է տուել ինձ։ Բայց ոչ. ես անարդար եմ դատում. նա իսկ մեզ հնարագիտութիւն է պարգևել. նա դրել է մեզ ովկիանոս—

աշխարհի ափին մերկ և թշուառ և ասել՝ լողա, ով կարող է լողալ, իսկ ով չէ կարող, թող խեղ-տի։ Ամեն մարդ իրաւունք ունի թէ ամենա-մեծ և թէ ամենափոքր բաների վրա։ Պահանջին յաղթում է պահանջը, և ոյժին՝ ոյժը։ Իրա-ւունքը յաղթողինն է և մեր ոյժերի սահմանները մեր օրէնքներն են։ Ի հարկէ գոյութիւն ունին ընդհանրական որոշ սկզբունքներ, որոնց մար-դիկ հնարել են ընդհանուր կեանքի գարկերակը շարժելու համար։ Օրինակ՝ պատուաւոր անունը. յիրաւի մի թանգագին գրամ, որը կարելի է շատ լաւ շահեցնել։ Խիղճը. ոհ, ի հարկէ. մի փառաւոր խրատիլակ կեռատենու վրա գրած՝ ճնճղուկներին վախեցնելու համար։ Իսկապէս շատ գովելի միջոցներ՝ յիմարներին զսպելու հա-մար... Իսկ ես... Անվախ դէպի յառաջ։ Ով չէ վախենում ոչ մի բանից, նոյնքան զօրեղ է, որքան նա, որից ամենքը վախենում են։ Այժմ մօդա է՝ հաղուստի վրա այնպիսի կոճակներ տնկել, որոնց կարելի է ըստ կարիքի յետ ու առաջ շարժել և հաղուստը նեղացնել կամ լայնացնել։ Ուրէմն մենք էլ նոր մօդայի համեմատ մի խիղճ կը պատրաստենք, որը կարելի կլինի հարկաւոր դէպքում լայնացնել կամ նեղացնել... Ես շատ բան եմ լսել այդպէս կոչած արիւնակցա-կան սիրոյ մասին։ Այս ինչ պարոնը քո եղ-բայրդ է. այսինքն թէ նոյն քուրայիցն է դուրս

եկել, որից դու ես դուրս եկած. ուստի նա պի-տի սուրբ լինի քեզ համար։ Տեսէք թէ որպիսի յիմարութեամբ մարմինների առնչութիւնից եզրա-կացութիւն են անում հոգիների համերաշխութեան մասին... Նա քո հայրն է, նա է քեզ կեանք տուել, դու նրա մարմինն ես— ուստի թող նա սուրբ լինի քեզ համար։ Դարձեալ մի անմիտ եզրակացութիւն։ Ես կը կամենայի իմանալ, թէ ինչու է նա գոյութիւն տուել ինձ. միթէ նա սի-րում էր ինձ, երբ ես դեռ բոլորովին գոյութիւն չունէի։ Ուրէմն որտեղ է սրբութիւնը. թերևս նոյն ինքն այն գործողութեան մէջ, որից ես յառաջ եկայ... Միթէ սա մի ուրիշ բան է, բայց եթէ անասնական գործողութիւն՝ անասնական կրքին բաւականութիւն տալու համար։ Կամ թէ դուցէ ես պիտի յարգեմ իմ հօրն այն պատճառով, որ նա ինքն սիրում է ինձ։ Սակայն այդ սէրն էլ ուրիշ բան չէ, բայց եթէ ունայն փառամո-լութիւն, որը յատուկ է բոլոր արուեստագէտ-ներին, որոնք պարծենումեն իրանց ստեղծագոր-ծութեան արդիւնքով, որքան էլ չնչին լինի նա... Անվախ դէպի գործ... Ես կը փչացնեմ ամեն բան, որ սահմանափակում է իմ իրաւունքները։ Ես պիտի ինքնիշխան լինեմ, որպէս զի զօրով ձեռք բերեմ այն բոլորը, ինչոր չեմ կարողանում ստանալ իմ ազգութեան պատճառով...

II.

Սակսոնական թագաւորութեան սահմանի մօտ գտնւած մի պանդոկում Կարլը և իւր ընկերը Ֆպիգէլբէրգը ժամանակ էին անցկացնում։ Ֆպիգէլբէրգը եռանդով կոնծում էր։ Իսկ Կարլը մի բաժակ գինի մօտը դրած, խորասուզւած էր մէկ գրքի ընթերցանութեան մէջ։ Նա խիստ անբաւական էր ժամանակակից կեանքի խիստ չնչին ոգուց և գիտական աշխարհի անբովանդակ դրութիւնից։ Ահա թէ ինչու յանկարծ մի կողմ նետեց գիրքը և սկսեց ինքն իրան գանգատւել։

„Զզւումեմ այդ թանաքամոլ դարի որդիներից, համեմատելով այն մարդկանց հետ, որոնց մասին կարդումեմ Պլուտարխի գրքի մէջ։ Ատուածային վառ կրակը հանգել է և նրա տեղը բռնել է թատրոնական շինծու հրավառութիւնը, որով չի վառվիլ նոյն իսկ մի ծխախոտ։ Եգիպտաբեղան յամարձակւում է վախկոտութեան մէջ մեղադրել Ալեքսանդր Մակեդոնացուն։ Այն հիւանդոտ դասախօսը, որը իւրաքանչիւր բառից յետ նաշատիր է բռնում քթին, զոռում է ֆիզիկական ոյժի նշանակութեան մասին։ Մի երեխայ գոյացնելուց յետոյ ուժասպառ դառնող պարոնները քննադատում են Անիբալի պատերազմական տակտիկան։ Թիու, թիու, այդ ուժասպառ դարի երեսին, որը ուրիշ բան չէ կարողանում

անել, բայց եթէ ծամծմել նախկին ժամանակների գործերը, շարշարել հին աշխարհի հերոսներին և աղաւաղել նրանց պատկերը անհամ ողբերգութիւնների մէջ։ Նրա երիկամունքի ոյժը սպառւել է և մարդկային սերունդը շարունակելու համար անհրաժեշտ է դիմել դարեջրի օգնութեան։ Այժմեան մարդիկ լիզումեն կոշիկ մաքրողի ոտները, եթէ նա կարող է բարեխօս լինել նորին ողորմածութեան առաջ, բայց ծաղրումեն այն արժանաւոր անհատին, որից չեն վախենում։ Միմեանց աստուածացնում են մի ման կերակրի պատճառով, բայց պատրաստ են թոյն խմացնելու իրար, որպէս զի աճուրտի ժամանակ կարողանան էժան ձեռք բերել մի չնչին մահճակալ։ Անիծում են սադուկեցուն, որ սակաւ է եկեղեցի յաճախում, բայց սուրբ սեղանի առաջ գրգռում են իրանց վաշխառուական տոկոսները հաշւելով... Ես պարտաւորւած եմ կապկպել մարմինս գոտիներով, իսկ հոգիս՝ օրէնքներով։ Օրէնքը ստիպում է կրիայի քայլերով առաջ գնալ այն մարդուն, որը կարող էր թռչել արծիւի նման։ Օրէնքը տակաւին ոչ մի մեծ մարդ չէ ստեղծել, իսկ ազատութիւնը յառաջ է բերել հսկաներ և հերոսներ։ Ցէ՛ք ինձ մի զօրագունդ՝ բաղկացած ինձ նման կորիճներից և Գերմանիայից յառաջ կը գայ այնպիսի մի հանրապետութիւն, որի հետ համեմատած՝

Հռոմը և Սպարտան կուսանոցների կը նմանեն“...

Մինչդեռ Կարլը խորասուզված է իւր տխուր մտքերի մէջ, Ֆպիգէլբէրգը աւելի ու աւելի է հարբում և գինու ազդեցութեան տակ ոգևորւում է արկածական ծրագիրներով, որոնք վաղուց արդէն բուն էին դրել նրա սրտում։ Նա համոզված է, թէ մարդ չէ կարող ազնիւ միջոցներով իւր համար երջանիկ կեանք ստեղծել, այլ անհրաժեշտ է գործ դնել ամեն տեսակի խարդախ կամ բռնի միջոցներ. պէտք է հնարագէտ լինել։ Նա հակված է դէպի զողութիւն, աւազակութիւն և սրանց նման նենգ գործունէութիւնները, ուստի օգտւելով Կարլի մելամաղձոտ տրամադրութիւնից աշխատում է թեքել նրան էլ իւր կողմը։ Բայց Կարլը այնպէս ստոր և թեթևամիտ չէ, որ առանց այլ և այլի ընդունէ նրա արկածական ծրագիրները։ Կարլը որոշել է միանգամայն թողել անկանոն կեանքը և լուրջ աշխատանքի մէջ որոնել իւր բաղդը...

—Բարով գնաս—ասում է նա հեգնօրէն իւր ընկերին—բարձրացիր դու խայտառակութեան սիւնի վրա և հասիր վառաց գագաթին։ Իսկ ինձ հրապուրում է անդորը կեանքը իմ հայրական անտառի ստւերում իմ Ամալիայի գրկում։ Դեռ անցեալ շաբաթ ես նամակով ներողութիւն եմ խնդրել հօրից և իմ ամենափոքը սխալն անգամ չեմ թաղցրել։ Իսկ ուր անկեղծութիւն կայ,

այնտեղ կայ նոյնպէս կարեկցութիւն և օգնութիւն։ Մենք պիտի միմեանց մնաս-բարև ասենք, Մորից։ Այսօր վերջին անգամն է, որ մենք միասին ենք։ Փոստը արդէն եկել է և հայրական ներողութիւնը արդէն այդ քաղաքի պատնէշների մէջ կ'լինի.

III.

Ճուտով յայտնւումեն Կարլի միւս ընկերները։ Ճվարցը տալիս է Կարլին նոր ստացած նամակը։ Կարլը անսահման ուրախ է, նա հաստատ հաւատացած է, որ հայրը ներել է իրան և կանչել է դէպի հայրենական տուն։ Բայց աւաղ... Կարլի իսկական նամակը եղբայրը չէ հասցրել հօրը, այլ փոխարէնը կարդացել է նրա մօտ այն զրպարտիչ նամակը, որի հետ մենք արդէն ծանօթ ենք։ Եւ ահա այժմ էլ Կարլը եղբօրից է պատասխան ստանում։ Տեսնենք թէ ինչ է գրում նա։

„Տարաբաղդ եղբայր։ Միայն կարճ կերպով պիտի յայտնեմ քեզ, թէ քո յոյսդ չի արդարացաւ։ Հայրդ հրամայեց գրել քեզ, որ դու կարող ես գնալ, ուր առաջնորդում են քեզ քո խայտառակ գործերը։ Նոյնպէս նրա կողմից յայտնում եմ, որ դու չը պիտի որևէ յոյս ունենաս, թէ երբևիցէ նրա ոտներին ընկած ողորմութիւն կը գտնես։ Նրա հրամանով ահա վերջացնում եմ նա-

մակը։ Մնաս բարև յաւիտեան։ Ես խղճում եմ քեզ։ Ֆրանց Մ՝օոր։“

Նամակը շփոթված կարդալով Կարլը յուսահատ դուրս թռաւ առանց մի բան արտասանելու։ Իսկ Ղպիդէլբէրգը խօսք բացեց ընկերների մօտ իւր ծրագիրների մասին.

—Ես ձեզ համար մի ծրագիր եմ կազմել։ Չէ՞ ասում, թէ վերջապէս ձեր ամենքի հոգսը ես պիտի քաշեմ... Ձեզանից պիտի յառաջ բերեմ հերոսներ, բէկեր, իշխաններ, աստուածներ... Ձեզանից պահանջում եմ միայն, որ քաջ լինէք, իսկ ինչ որ մտքիս է վերաբերում, այդ իմ գործն է... Եւ ի՞նչ ունէք դուք այսուհետև կորցնելու... Եթէ ձեր երակների մէջ դեռ հօսում է մի կաթիլ գերմանական արիւն, եկէք ուրեմն... Գնանք Բօհէմիայի անտառները, աւազակային խումբ կազմենք և... հը, ի՞նչ էք շարել... Մի՞թէ ձեզ ուրիշ ելք է մնում։ Կամենում էք պարտքի պատճառով բանտ նստել, մինչև որ վերջին դատաստանի ահեղ փողը կը փչեն։ Կամ՞թէ կամենում էք մի կտոր հացի համար բահն ու թիակն բռնած տանջել ձեզ, կամ՞թէ լուսամուտների տակ աշուղութիւն անելով ողորմութիւն ստանալ, կամ թէ... Եւ ի՞նչն է խանգարում ձեզ նշանաւոր մարդիկ դառնալ։ Իմ ծրագիրը շատ յարմար է այդ նպատակի համար. միայն այդ ճանապարհով ձեռք կը բերէք դուք փառք և անմահութիւն...

Դուք մտածում էք ազնուութեան մասին։ Բայց ի՞նչ է ազնուութիւնը... Հարուստ վաշխառուի մէջքից վերցնել երրորդ մասը այն ոսկուց, որ խանգարում է նրա քունը։ Ապարդիւն մնացած դրամին ընթացք տալ, դոյքերի հաւասարակշռութիւնը վերականգնել. մի խօսքով՝ նորից յետ բերել ոսկեայ դարեշրջանը, ազատել աշխարհը ձրիակերներից, պատերազմներից, ժանտախտից, սովից և մանաւանդ փարիսեցիներից... Ահա՞ թէ ի՞նչ է նշանակում արժանաւոր գործիք դառնալ նախախնամութեան ձեռքին։ Չէ՞ որ շատ անգամ այն համաշխարհային հանճարը, որը կարող էր աշխարհը բարեկարգել, փթթում է բանտերում, բայց նրա անունը յիշւում է հարիւր և հազար տարիներ։ Իսկ շատ թագաւորներ առհասարակ չէին յիշւիլ պատմութեան մէջ, եթէ պատմագիրը չը կամենար գիրքը հաստացնել՝ աւելի վարձ ստանալու համար։

Ղպիդէլբէրգի խօսքը ներկայացնում է մի անբաժան խառնուրդ, որի մէջ ստոր և սուտ արտայայտութիւնների հետ շաղկապւած են և մեծամեծ ճշմարտութիւններ։ Ուստի նրանք ներգործեցին տաքարիւն երիտասարդների վրա և սրանք համաձայնեցին աւազակային խումբ կազմել, եթէ միայն Դրակը դառնար նրանց առաջնորդը։ Ղպիդէլբէրգը ինքն էր մտադիր պարապուլիս դառնալու, բայց ամենքը լաւ էին հասկա-

ՀՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ Գ. Մեհրաբյանի անվան
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԳԱ
ԿԺ-29

նում, որ այդ արդէն նրա գործը չէր, որովհետև նա հարկաւոր քաջասրտութիւնը չունէր։ Բաղտաւորապէս հէնց այդ բոպէին կրկին եկաւ Կարլը։

„Օ՜, մարդիկ, մարդիկ—բացականչեց նա խորը վշտացած—նենգաւոր կոկորդիլոսներ։ Ձեր արտասուքը ջուր է, ձեր սիրտը՝ երկաթ։ Ձրթունքի վրա համբոյր, իսկ կրծքի տակ սուր։ Առիւծները և բորենիները կերակրումեն իրանց ձագերին, ագռաւները լէշ են որոնում իրանց ճուտերի համար, իսկ մարդը, մարդը... Ես սովորել եմ չարին համբերել, կարող եմ ժպտալով նայել, երբ իմ կատաղի թշնամին կը խմէ իմ սրտի արիւնը... բայց երբ դաւաճանողը արիւնակից սէրն է, այն ժամանակ բորբոքւիր, կրակվագը դարձիր, հեզիկ դառնուկ... Թող իմ երակներից դայրոյթ և կորուստ ժայթքէ... Ինչու այդ հոգին չէ մտել մի վագրի մէջ, որ կուծոտէր մարդկանց միսը։ Սա է սէրը սիրոյ փոխարէն։ Ոհ եթէ ես մի արջ լինէի և կարողանայի հիւսիսի բոլոր արջերին առաջնորդել մարդկանց արիւնարբու սեռի դէմ։ Ջղջումն և ոչ մի ներողութիւն։ Ոհ, ես կը կամենայի ովկիանոսը թունաւորել, որպէս զի մարդիկ բոլոր աղբիւրներից թոյն ծծեն։ Վստահութիւն, անսահման ապաւինութիւն և ոչ մի խղճահարութիւն... Ոչ՝, այդ անհաւատալի է, այդ երազ է, այդ խարուսիկ երևոյթ է։ Այնպիսի սրտաշարժ խնդիրք, այնպիսի

արտասուախառն ապաշխարութիւն... Քարերը լաց կ'լինէին, բայց... Ոհ, եթէ ես կարողանայի ապստամբութեան փողը հնչեցնել ամբողջ տիեզերքի մէջ, և օդը, երկիրն ու ծովը պատերազմի կոչել այդ գազանային սերունդի դէմ։"

Ընկերներից մէկը փորձում է յայտնել Կարլին իրանց ընդհանուր ցանկութիւնը, Բայց Կարլը կատաղի կերպով բացականչում է.

„Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից. չէ՛ որ քո անունն էլ մարդ է, քեզ էլ կին է ծնել։ Կորիր իմ աչքերից, դու քո մարդկային դէմքով։ Ոհ, եթէ մէկը կարողանար մի սուր դնել իմ ձեռի մէջ. որով կարելի լինէր այդ իժերի սերնդին այրող վէրք հասցնել... Ով կարողանայ ասել ինձ, թէ ինչպէս է պէտք հարւածել, փշրել, ոչնչացնել մարդկութիւնը, նա կը դառնայ իմ բարեկամը, իմ հրէշտակը, իմ Աստուածը... Ես կը պաշտեմ այդ պիսի մէկին...

Ընկերները յայտնում են նրան իրանց որոշումը և նա բացականչում է. „Այո՛, այդպէս պիտի անենք մենք։ Աւազակ և մարդասպան—որպիսի բարձր բան. երդւում եմ հոգով, որ ես ձեր աւազակապետն եմ... Ահա՛ իմ աչքերը բացուեցան։ Որպիսի յիմարն էի, որ կամենում էի նորից վանդակ մտնել։ Իմ հոգին ծարաւ է գործի համար, իմ շունչը՝ ազատութեան համար... Մարդիկ թագցրին իմ աչքից մարդկայնութիւնը...

Ուրեմն հեռու ինձնից մարդասիրութիւն և խղճահարութիւն... Կանգնեցէք իմ շուրջը և երդուցէք հաւատարիմ ու հնազանդ լինել ինձ մինչև մահ։ Եւ ես էլ երդումեմ լինել ձեր հաւատարիմ և քաջ պետը մինչև իմ մահը։ Դէհ, գնանք այժմ։ Մի վախենաք մահից ու վտանգից, որովհետև մահը որտեղ էլ հանդիպելու լինի, միևնոյն է։"

Ամենքը երդւում են և ոգևորւած ճանապարհ են ընկնում։ Միայն Ղպիդելբերգն է տխուր, որ իրան չը յաջողուեց առաջնորդ դառնալ։

IV.

Մինչդեռ Կարլը զբաղւած էր խումբի կազմակերպութեամբ, Ֆրանցը շարունակում էր ստոր կերպով քարշ գալ Ամալիայի ետևից, նրան իւր թալակը գցելու նպատակով։ Ահա մտել է նա Ամալիայի սենեակը և զանազան սուտերով կամենում է նսեմացնել Կարլի պատկերը օրիորդի երևակայութեան մէջ։ „Մի թէ ես աւելի անարժան եմ—ասում է նա Ամալիային—քանի թէ Կարլը, որին հայրը անիծել է։ Օրիորդը պատասխանում է, թէ այնպիսի հօրը միայն Ֆրանցի նման որդիներ են արժանի։ Ֆրանցի սիրային բացատրութիւններին Ամալիան պատասխանում է. „Եթէ ինձ սիրումես, ուրեմն իմ խնդիրքը պիտի չը մերժես։" Ֆրանցը սիրտ առնելով հաւատացնում է, որ ինքը երբէք չի մերժիլ նրա

խնդիրքը։ Ապա օրիորդը պատասխանում է.

„Ես խնդրումեմ քեզ, որ դու ինձ ատես"։

Աւելի զօրեղ մերժում չէ կարող երբէք հնարել մի անմեղ օրիորդը, բայց Ֆրանցը անողոք է. նա ձեռք չի վերցնիլ։ Նա դեռ միջոցներ շատ ունի։ Ահա նա սկսում է ապացուցանել, թէ որքան ապերախտ է Կարլը։ Չէ՞ որ Ամալիան բոլոր սրտով սիրում է նրան։ Սակայն նա կարողացել է Ամալիայի նուիրած մատանին մի պոռնիկ կնոջ ընծայել։ Ամալիան չէ հաւատում։ Ֆրանցը շարունակում է իւր զրպարտութիւնները։ Նրա ասելով, Կարլը սարսափելի կերպով վարակւել է կեղտոտ հիւանդութիւններով։ Նրա աչքերը դեղնել են, ցաւը ուտում է նրա ոսկորների ծուծը, սպառւած է նրա երիտասարդական ոյժը, ժահրալի հեղուկ է բղխում նրա ճակատից, թշերից և մարմնի ամբողջ մակերևոյթից։ Բայց Ամալիան պնդումէ, թէ այդ բոլորը սուտ է։ Ուստի Ֆրանցը փոխում է իւր խօսակցութեան եղանակը։ Սկսում է հաւատացնել, թէ ինքը կամենում էր փորձել Ամալիային։ Ֆրանցը իրը թէ սիրում է Կարլին, „որովհետև բոլորովին նման է նրան իւր հոգեկան յատկութիւններով"։ Կարլը ճանապարհ ընկնելուց երդմնեցրել է եղբօրը, որ եթէ ինքը չի վերադառնայ, նա դառնայ Ամալիայի ամուսինը։ Այդ խօսքը արդէն վերջնականօրէն համոզում է օրիորդին, որ Ֆրանցի խօսքերի մէջ

մի հատիկ ճշմարիտ բառ չկայ, որովհետև նոյն այդ յիշած օրը Կարլը խօսք է առել Ամալիայից, որ նա միշտ միայն իրան պատկանէ։ Օրիորդը դուրս է վազում վերջապէս Ֆրանցին իւր սենեակից։ Ֆրանցը դուրս գնալով, հասկացնում է օրիորդին, թէ Կարլը այժմ մուրացականութեամբ է հաց ճարում, ուստի Ամալիան պոկում է իւր պարանոցից մարգարտաշարը, ասելով թէ ինքն էլ կամենում է աղքատ լինել, որ դարձեալ Կարլին սիրելի լինի։

V.

Ֆրանցը իւր չար նպատակներին հասնելու համար կամենում է ինքնիշխան տէր լինել ամբոցում, բայց այդ անհնար է քանի դեռ ծերունին կենդանի է։ Ուստի անգութ որդին անհամբեր սպասում է հօր մահուան և ոչ միայն սպասում է, այլ միտք է անում, թէ ինչ հնարքով կարող է ըստ կարելոյն արագացնել ծերունու մահը։

„Այդ արդէն չափազանց երկարանում է— ասում է Ֆրանցը հօր կեանքի մասին մտածելով —ուրեմն այդ մսի կտորը պիտի դեռ արգելէ իմ ընթացքը այն ստորերկրեայ շան պէս, որի մասին պատմում է առասպելը։ Մի՞թէ իմ ծրագիրները պիտի ոչնչանան երկաթեայ լծի տակ։ Մի՞թէ իմ արծաւային հոգին պիտի հպատակւի կրիայի

դանդաղ քայլերին։ Մէկ ճրագ հանգցնել, որը ինքնըստինքեան միայն իւղի վերջին կաթիլներով է պահւում, մեծ բան չէ։ Սակայն չէի կամենալ ուրիշներին գայթակղութիւն պատճառել։ Չէի կամենալ, որ նա սպանւի, այլ որ նրա կեանքը սպառւի։ Ես կը կամենայի այնպէս անել, որպէս անում է փորձառու բժիշկը, միայն թէ հակառակ ուղղութեամբ։ Հարկաւոր է ոչ թէ արգելել բնութեան ընթացքը, որպէս անում է բժիշկը, այլ ընդհակառակն՝ նպաստել բնութեան։ Եւ եթէ մենք կարող ենք որոշ միջոցներ գործ դնելով կեանքը երկարացնել, ինչու պիտի չը կարողանանք հակառակ միջոցներով կարճացնել նրան։ Փիլիսոփաները սովորցնում են մեզ, թէ որպիսի ճշտութեամբ համապատասխանում են իրար հոգեկան տպաւորութիւնները և մարմնի ֆիզիկական շարժումները։ Անախորժ զգացումներին հետևումեն միշտ մարմնական անկանոնութիւններ, կիրքերը խորտակումեն կենսական ոյժը։ Ճնշած հոգին վայր է գլորում իւր բնակարանը, մարմինը։ Բայց ինչպէս անել, որ հոգոյ միջոցով մարմինը բոլորովին խորտակւի։ Ահա ձեզ մի արժանաւոր արւեստ... Եւ ինչպէս պիտի ես գործ սկսեմ։ Կիրքերի որ տեսակը ընտրեմ։ Ո՞րն է կեանքի ամենազարհուրելի թշնամին։ Բարկութիւնը—այդ սոված գայլը իսկոյն կշտանում է։ Հոգսը—այդ որդնը խիստ կամաց է կրծում։

Վիշ՞տը—այդ օձը շատ հանգարդութեամբ է սողում։ Վախը—յոյսը թուլացնում է նրան։ Ինչ. մի՞թէ այդ է մարդու կեանքը խորտակելու ամբողջ զինարանը։ Այժմ ինչ՞ անել։ Հա՛, սարսափը... Ի՞նչ չէ կարող անել սարսափը։ Ի՞նչ կարող են անել խելքն ու կրօնը այդ հսկայի սառած կրծքի դէմ՞։

Այդ ժամանակ գալիս է Ֆրանցի մօտ պալատական պաշտօնեայ Հէրմանը, Կարլի ախոյեանը։ Նա էլ մի ժամանակ աչք ունէր Ամալիայի վրա։ Ֆրանցը նորոգում է հին դէպքը Հէրմանի երևակայութեան մէջ և աւելացնում է, թէ նա իբր ասպետ պիտի հեշտութեամբ ձեռք չը վերցնէ օրիորդից, և յոյս է տալիս զորձին նպաստել իւր կողմից։ „Մ՛օտ եկ—ասում է Ֆրանցը —դուցէ դու չը գիտես, թէ Կարլը զրկւած է ժառանգութիւնից։ Արդէն տասնումէկ ամիս է, որ նա աքսորւած է։ Բայց Ծերունին սկսել է զղջալ իւր շուտափոյթ վճռի մասին։ Ամալիան իւր կողմից շարունակ անհանգստացնում է նրան Կարլի պատճառով։ Վաղ թէ ուշ Ծերունին կը սկսէ որոնել որդուն և այն ժամանակ մնաս բարև Հէրման, իսկ Կարլը կը ստանայ հօր ժառանգութիւնը, կ՛ամուսնանայ Ամալիայի հետ և հանդիստ կ՛ապրէ ամրոցում։ Եւ ես էլ, որ մտադիր էի քեզ բաղդաւորացնել, կը մնամ նրա դռանը կանգնած... Լսիր ուրեմն իմ խորհուրդը։ Գնա,

հպարտ փոխիր, որ բոլորովին չը ճանաչես, Ծերունուն իմաց տուր, իբր թէ ուղղակի Բոհեմիայից ես գալիս և եղբօրս հետ միասին մասնակցել ես Պրագայի կոտորածին և տեսել ես նրան մեռնելիս... Վերցրու այդ ծրարը, այստեղ մանրամասն գրւած է քո ասելիքը։ Եւ ահա վկայութիւնները, որոնք կը փարատեն ամենայն կասկած։ Դէ՛հ, գնա՛ հիմա, միայն ծածուկ, որ քեզ չը նկատեն։ Թէ ինչ կ՛լինի յետոյ, այդ մասին ես կը հոգամ... Այդ միջոցով մենք կը իրագործենք մեր բոլոր նպատակները միանգամից և արագութեամբ։ Ամալիան յոյսը կը կտրէ Կարլից։ Ծերունին սարսափից կը մեռնի, որովհետև քայքայւած շէնքը երկրաշարժին չի դիմանալ։ Ես կը դառնամ նրա միակ ժառանգը։ Ամալիան կորցնելով իւր պաշտպանին, խաղալիք կը դառնայ իմ ձեռին։... Մի խօսքով ամեն բան կարգի կ՛ընկնի։ Հէրմանը հաստատ խօսք է տալիս և դուրս է գնում, իսկ Ֆրանցը ինքն իրան ասում է, թէ Հէրմանը կը ստանայ ոչ թէ Ամալիային, այլ մի ծառայող աղջիկ։

VI.

Ծերունի Մ՛օրի սիրտը չէ հանգստանում սկսեալ այն օրից, երբ նա թոյլատրեց Ֆրանցին մերժողական նամակ գրել Կարլին։ Կոմսը տարակուսում է. նրան թւում է, թէ այստեղ ինչոր

սխալ կայ, թէ իւր վարմունքը շատ էլ արդարացի չէ։ Մանաւանդ բորբոքում է նրա հոգեկան կրակը դեռահաս օրիորդը, որը հալումաշ է լինում իւր Կարլի համար և շարունակ զգալ է տալիս ծերունուն, թէ նա սխալւած է։

Մի օր ծերունին բազկաթոռի մէջ նստած քուն էր մտել։ Ամալիան ներս մտնելով գտաւ ծերունուն երազի մէջ Կարլի հետ խօսելիս։ Օրիորդը տեսնելով, որ երազի մէջ նա մտատանջւում է, զարթնեցրեց որ հանգստանայ։ Նոմոը աչքերը բացելով նկատեց պատի վրա Կարլի պատանեկան պատկերը, որը վաղուց նկարել էր Ամալիան։ Կարլը ժպտում էր անմեղ աչքերով, բայց ծերունին երևակայում էր, թէ ինչպէս այժմ այդ ժպիտը բարկութեան փոխւած կ'լինի։ Ամալիան իւր Կարլի փոխարէն ներում է ծերունուն։ Նրանք երկուսն էլ մխիթարումեն իրանց այն յուսով, որ գոնեայ հանդերձեալ աշխարհում կը տեսնեն Կարլին, իսկ այժմ երկուսն էլ մահ են կամենում։ Ամալիան նստում է դաշնամուրի մօտ և նւագում է պատմական հերոսի Հէկտորի կնոջ սրտաշարժ երգը, որով նա առ միշտ բաժանւումէր հերոս—ամուսնուց։

Այդ ժամանակ Ֆրանցը ներս է առաջնորդում այլակերպւած Հէրմանին, իբր թէ Բոհէմիայից եկած օտարականին, որը կարևոր լուր է բերել Կարլի մասին։ Հէրմանը պատմում է յետևեալը։

«Կարլը վաղուց հեռացել է Լայպցիկից և սկսել է թափառել ամբողջ Գերմանիայում՝ գլխաբաց, ոտնաբոբիկ, դոնների առջև հաց մուրալով։ Երբ սկսել է Աւստրօ-Պրուսական պատերազմը, Կարլը լսելով Ֆրիդրիխի յաղթական թմբուկի ձայնը. գնացել է Բոհեմիա։ Թոյլ տէք —ասել է նա մեծ զօրապետին—մեռնել հերոսական մահով. ես հայր չունեմ։ Մի շաբաթից յետոյ տեղի է ունեցել Պրագայի սարսափելի կոտորածը, որին մասնակից էր և ինքը „օտարականը։“ „Ես տեսայ—աւելացնում է նա—թէ ինչպէս Կարլը հրաշքներ էր գործում կոտորածի ժամանակ։ Հինգ անգամ գունդը նորոգւեց, մինչդեռ Կարլը չը շարժւեց տեղից։ Հրատապ գնտակները զզվում էին նրա շուրջը, բայց նա չէր հեռանում տեղից։ Վերջապէս մի գնդակ ջարդեց նրա աջ ձեռը. իսկոյն նա դրօշակը միւս ձեռքը առաւ և էլի կանգնուն մնաց։ Երեկոյեան դէմ գտայ ես նրան գետնի վրա փռւած ու ծանր վիրաւորւած։ Զախ ձեռքով արգելում էր նա արեան հոսանքը, իսկ աջ ձեռը թաղել էր աւազի մէջ։ Եղբայր—հարցրեց նա ինձ—ճշմարիտ է, որ մեր գեներալը սպանւած է։“ Ես հաստատեցի նրա խօսքը։ Ուրեմն ով որ քաջ է, թող հետևէ նրան, ասաց նա և ձեռքը վերցնելով վէրքի վրայից, թոյլ տաւ որ արիւնը առատ հոսէ և շուտով հոգին աւանդեց։

Կեղծ օտարականը, վերջացնելով իւր հնարովի պատմութիւնը, տաւ Ծերունուն Ամալիայի պատկերը և մի սուր, որը իբր թէ Կարլի սուրն էր։ Նրա մի երեսին արիւնով գրած էր. „Ֆրանց, մի թողիր իմ Ամալիային“, իսկ միւս երեսին՝ „Ամալիա հզօր մահը քանդեց քո երդումը“։ Վերջին խօսքերից Ամալիան ըմբռնեց, որ այդ բոլորը շինծու էր և որ օտարականը կաշառուած է Ֆրանցի ձեռքով։ Բայց երբ Հէրմանը նկատեց, թէ Կարլի վերջին բառը Ամալիայի անունն էր, օրիորդը նորից սկսեց հաւատալ։ Հէրմանի ասելով Կարլը գանգատւում էր, թէ իրան յուսահատութեան դուռը հասցնողը իւր հայրն է եղել։ Ծերունու սիրտը տակն ու վրայ եղաւ։ Նա պարզ գիտակցում է, որ իւր անգթութեամբ սպանել է որդուն։ Միևնոյն ժամանակ նա չէ մոռանում, որ իրան մոլորեցնողը Ֆրանցն է եղել, ուստի յարձակւելով նրա վրա, պահանջեց իւր որդուն։ Ֆրանցը հրեց Ծերունուն իրանից և դուրս գնաց։ Ծերունին բակկաթոռի մէջ ընկղմած տանջւում է։ Ամալիան մխիթարում է նրան հանդերձեալ կեանքի յոյսերով։ Ծերունին խնդրում է բերել սուրը գիրքը և կարդալ նրա համար Յովսէփի պատմութիւնը։ Ամալիան կարդում է, թէ ինչպէս Յովսէփի եղբայրները արեան մէջ շաղախեցին նրա պատմուճանը և ուղարկեցին Յակոբին և նա հաւատաց, որ գազանը պատռել է

Յովսէփին և սկսեց ողբալ։ Այդ պատմութեան ազդեցութեան տակ Ծերունին անշնչացած վայր ընկաւ։ Ամալիան սարսափած դուրս վազեց, աղաղակելով թէ Ծերունին մեռաւ։ Իսկոյն ներս եկաւ Ֆրանցը և փակելով հօր աչքերը սկսեց ինքն իրան քաջալերել։

„Ո՞վ կարող է այժմ յամարձակւել՝ դատաստանի առաջ կանչել ինձ, կամ թէ ինձ սրիկայ անւանել։ Թող կորչէ հեղութեան և առաքինութեան անտանելի դիմակը։ Այժմ դուք կը տեսնէք իսկական Ֆրանցին և կը զարհուրէք։ Հայրս շատ քաղցրութեամբ էր վերաբերւում դէպի իւր շրջապատը, ստորադրեալներին իւր ընտանիքի անդամներն էր համարում, նստում էր դարպասի առաջ և անցուդարձ անողներին եղբայր կամ որդեակ էր անւանում։ Իմ աչքերը կը նայեն ձեր վրա կայծակաբեր ամպի նման, իմ իշխանական անունը կը լողայ այդ լեռների վրա, որպէս մի սպառնալի վայր ընկնող աստղ, իմ ճակատի կնճիռը կլինի ձեր հողմացոյցը... Իմ կալւածքներում պիտի բանը այն տեղ հասցնեմ, որ գետնախնձորը և ամենավատ գարեջուրը միայն տոներին գործածւին և վայ նրան, որ կ'երևայ իմ աչքին փափուկ և կարմիր թշերով։ Ճորտային երկչոտութիւնը և դալկացած գոյնը պիտի որոշեն իմ ստորադրեալներին և այդ գոյնին համապատասխան համազգեստ պիտի հագնեն ամենքը...

VII.

Այժմ տեսնենք թէ ինչ է կատարւում Բոհեմիայի անտառներում։ Կարլի շուրջը արդէն հաւաքւել են հարիւրաչափ աւազակներ, որոնց մէջ կան երկու տեսակ մարդիկ։ Ոմանք սրտով ու հոգով իսկապէս նենգաւոր ու խարդախ մարդիկ են, բայց կան և շատերը, որոնց միայն արտաքին հանգամանքներն են գցել այդ անմարդավայել ասպարիզի մէջ։ Վերջինների թւին էր պատկանում և Բոլլէրը, որը Կարլի մօտիկ ընկերը և սիրելին էր։

Ահա այդ Բոլլէրին պատահեց ընկնել կառավարութեան ձեռքը։ Երեք օր դատաստան անելուց յետոյ վճռեցին կախաղան բարձրացնել նրան։ Լսելով այդ լուրը, Կարլը որոշեց ամեն ջանք գործ դնել ընկերին ազատելու համար, կամ թէ գոնեայ ըստ կարելոյն թանգ նստացնել ընկերի կորուստը այն փարիսեցիական քաղաքին, ուր նրան կախելու էին։

Բոլլէրին կախելու օրը եկաւ։ Ամբողջ քաղաքը ոտքի վրա է։ Ամենքը սպասումեն մի առանձին հետաքրքրութեամբ, թէ ինչպէս է իրանց աչքի առաջ բռնի կերպով սպանուելու իրանց նման մի մարդ։ Կախաղանը պատրաստած է քաղաքից դուրս մի ընդարձակ դաշտում, և ամենքը, թողնելով իրանց բան ու գործը, գնացել են

թամաշայ անելու։ Այդ ժամանակ աւազակները անսպասելի կերպով մտնում են քաղաք և վառումեն նրա ամենագլխաւոր կենտրոնները, ի միջի այլոց պայթեցնում են վառօդի աշտարակը։ Հազիւ Բոլլէրին բարձրացրել էին կախաղանի սանդուխների վրա, երբ սարսափով նկատեցին, որ քաղաքը ծուխի մէջ կորել է։ Ամենքը շարած վազեցին դէպի տուն. դահիճներն անգամ շփոթուած էին և չը գիտէին ինչ անել։ Ընդհանուր շփոթութիւնից օգտւելով, Բոլլէրը կտրատում է իւր կապանքները և փախչում։ Հասնելով գետի ափը, Բոլլէրը դէն է գցում բանտային զգեստը և լողալով անցնում է գետը, ուր հանդիպում է նրան Կարլը մի ձեռք պատրաստ հագուստով։ Օգտւելով ամբողջ քաղաքի շփոթութիւնից, աւազակները մի շարք ասպատակութիւններ են անում և փախչում անտառը։ Այդպիսով Բոլլէրը ազատում է։

Հասնելով անտառը աւազակները սկսումեն միմիանց պատմել իրանց քաջութիւնների մասին։ Կարլը ցնծում է, որ կարողացաւ ընկերին ազատել ուղղակի կախաղանից։ Բոլլէրը երդւում է իւր վերջին կաթիլ արիւնը չը խնայել Կարլի համար։ Բայց Կարլի ուրախութիւնը շուտով թունաւորւում է։ Երբ աւազակները մի առ մի պատմում են իրանց քաջութիւնների մասին, Կարլը ցաւօք սրտի նկատում է, որ շատերը կատարել

են և ամենասոսոր գործեր, կոտորել են կանանց և երեխաներին և այլն։ Աւազակների մէկը ծիծաղելով պատմում է. թէ ինչպէս ինքն մի ծծկեր երեխայ գտնելով, վերցրեց և նետեց կրակի մէջ։ Այդ բանը այնպէս զայրացնում է Կարլին, որ նա հրամայում է աւազակին անմիջապէս հանել աւազակային հանդերձը և կորչել-հեռանալ իւր բանակից։ Նա զայրացած սպառնում է շուտով պատժել բոլոր ստոր-չարագործներին։ Կարլի որամադրութիւնը վատացած տեսնելով, աւազակները դէս ու դէն են քաշւում և նա մէնակ մնալով ընկնում է խորին մտատանջութեան մէջ։

„Մի լսիր սրանց ով երկնային Տէր։ Ի՞նչպէս անեմ ես։ ինչ անես դու, եթէ քո ժանդախտը, քո սովը քո հեղեղը անմեղին էլ մեղաւորի հետ ընաջինջ են անում։ Ո՞վ կարող է ստիպել բռնկւած կրակին, որ նա այրելով մրջիւնների վնասակար բները, չը վնասէ արտերին։ Ախ թիւ, երեխաներին մորթել, կանանց սպանել, հիւանդներին ծաղրել... Ինչպէս վիրաւորումէ ինձ այդպիսի գործունէութիւնը։ Թունաւորւած են ուրեմն իմ ամենագեղեցիկ ծրագիրները։ Ահա կանգնած եմ ես երկնքի առաջ ամօթահար և խայտառակւած այն երեխայի պէս, որը Արամազդի գաւազանը վերցնելով, հսկաների փոխարէն թզուկներին էր ջարդում։ Գնա, գնա. դու չես այն մարդը, որը պիտի բռնէ ձեռին բարձր

գատաստանի վրիժառու սուրը։ Դու յաղթեցիր հէնց առաջին հարւածից։ Այո, ես կը հրաժարւեմ այդ յանդուգն ծրագրից և կը գնամ սոզալու մի օրհէ քարայրի մէջ, ուր արեգակը չի տեսնիլ իմ խայտառակութիւնը։“

Կարլին սթափեցնում են ընկերները, որոնք մօտ վազելով յայտնում են, որ իրանք մեծ վտանգի մէջ են։ Զօրքերի մի ամբողջ վաշտ շրջապատել է անտառը և պատրաստւում է յարձակում գործելու։ Կարլը հրամայում է լցնել բոլոր հրացանները և պատրաստ կանգնել։ Ոմանք պիտի թագնւին ծածուկ տեղերում և գնտակներ արձակեն առանց իրանք երևալու։ Ինքն իւր ամենարնտիր ընկերներով պիտի յարձակւի կենտրօնի վրա։ Ձիերին էլ պիտի բաց թողնեն, որ զինուորներին շփոթեցնեն։ Բայց հազիւ Կարլը այդ կարգադրութիւնը անում է, ահա մօտենում է նրանց մի արեղայ, իբր պատգամաւոր կառավարութեան կողմից։

VIII.

Ամենքը զարմացած նայումեն։ Արեղան մօտ է գալիս և բացականչում է.

„Ա՞յս է ուրեմն օձերի բունը։ Ի՞մ պարոններ, ես եկեղեցոյ սպասաւոր եմ և ահա այնտեղ կանգնած են հարիւրաւոր զինուորներ, որոնք

պատրաստ են պաշտպանելու իմ ամեն մի մազը։ Ինձ ուղարկել է բարձր իշխանութիւնը, որի ձեռքին է գտնւում կեանքի ու մահուան դատավճիռը։ Դուք գողեր, դուք հրձիգներ, դուք սրիկաներ, դուք թունաւոր օձի ճուտեր, դուք մարդկութեան կեղտեր, դժոխքի ծնունդներ, կախաղանի գաւակներ"...

Աւազակները կամենում են տեղն ու տեղը սպանել շատախօս աբեղային, բայց Կարլը արգելումէ այդ և խնդրում է աբեղային խօսքը շարունակել։

„Եւ դու, պատուելի աւազակապետ, գողերի իշխան, դժոխքի թագաւոր, սրիկաների պարագլուխ, բոլորովին նման այն չարագործ դեին, որը անմեղ հրեշտակների ամբողջ լեգիոններ վառեց ապստամբութեան կրակով և իւր հետ միասին գլորեց նզովքի խոր անդունդը, քո ետեւից լսւում է որբացած մայրերի ողբը, արիւնը ջրի պէս ես խմում դու, քո անգութ թրի համար մարդիկ սաբոնի փրփուրի արժէք չունեն։ Զարհուրելի մարդ, չէ այրում քո անիծեալ մատները քո ձեռքով սպանւած կոմսի արիւնը։ Դու չէիր, որ աւազակային ձեռներովդ կոտրեցիր Աստուծոյ սուրբ տաճարի դուռը և լրբաբար գողացար հաղորդութեան սուրբ անօթները։ Դու չէիր, որ մեր աստուածավախ քաղաքը կրակ տուիր և վառօթի աշտարակը կործանեցիր բարի քրիս-

տոնեաների գլխին։ Զարհուրելի, զարհուրելի յանցանքներ, որոնք մինչև երկինք բողոքումեն։"

Կարլը խօստովանում է, որ այդ բոլորը ինքն է արել, միայն խնդրում է յայտնել, թէ ինչ է իսկապէս աբեղայի պատգամաւորութեան նպատակը։ Աբեղան պատասխանում է.

„Նայիր չուրջդ, ով չարագործ, տես թէ որպէս շրջապատւած ես մեր ձիաւորներով։ Փախչելու ոչ մի հնար չկայ և դուք չէք կարող ազատուել այդ ծառերի վրա կախուելուց։ Բայց լսիր, թէ ինչպիսի բարեսրտութեամբ և երկայնամտութեամբ է վերաբերւում դէպի քեզ դատաստանը։ Եթէ դու իսկոյն խոնարհւես խաչի առաջ և դթութիւն խնդրես, ապա արդարադատութիւնը կը ներէ քո յանցանքների կէսը և քո պատիժը կը պակասեցնէ"։

Կրկին աւազակները յարձակւում են աբեղայի վրա, բայց Կարլը հետ է մղում նրանց և դառնում է դէպի աբեղան ասելով.

„Նայեցէք, սրբազան հայր. այստեղ իմ հրամանի ներքոյ գտնւում են միայն եօթանասուն և ինն հոգի, որոնք սովոր չեն թուչկոտել մեծաւորի հրամանի համեմատ... Իսկ այնտեղ կանգնած են հարիւրաւոր զինւորներ, որոնց մազը հրացանի տակ է սպիտակել։ Բայց լսեցէք. այդպէս է ասում Հեղ Մօրը, մարդասպանների պարագլու-

խը։ Ճշմարիտ է, որ ես սպանելեմ ձեր կոմսին, կրակ եմ տալ և թալանել եգիպտների եկեղեցին, հրդեհել եմ ձեր մեհեանատ քաղաքը և խորտակել եմ վառոդի աշտարակը քրիստոնեաների գլխին, բայց դեռ բոլորը այդ չէ։ Ես աւելի շատ բաներ եմ արել։ Տեսնում էք այդ թանգագին մատանիները, որ շարած են իմ մատների վրա։ Գնացէք և բառ-առ-բառ հաղորդեցէք կեանքի ու մահուան դատավճիռ կայացնող պատուելի դատաւորներին, ինչոր դուք այժմ տեսնում ու լսում էք։ Ահա այդ յակինթը հանել եմ ես մէկ մինիստրի մատից, որին որսի ժամանակ սպանեցի իւր իշխանի ոտների տակ։ Նա կարողացել էր ամենացածր խաւերից բարձրանալ մինչև պետական առաջին պաշտօնեայի աստիճանը, բայց ինչ միջոցներով... ոտնատակ անելով իւր պաշտօնակիցներին և որբերին արտասուք թափել տալով։ Իսկ այդ ադամանդը հանել եմ ելումտի խորհրդականի մատից, որը սակարգութեամբ վաճառում էր տիտղոսները և պաշտօնները, իսկ վշտացած հայրենասէրին վռնդում էր ասպարիզից։ Այդ ադաթը հանել եմ ձեր պաշտօնակից մի հոգևորականի մատից, որովհետև նա ամբիոնից ողբ էր կարդում, թէ ինկվիզիցիան վերացել է։ Ես կարող էի շատ աւելի բաներ պատմել Ձեզ, բայց այդքանն էլ ափսոսում եմ“...

Արեղան սկսում է հառաչել և Փառաւոն է

անանում Կարլին։ Իսկ վերջինս դառնալով դէպի ընկերները ասում է.

„Լսում էք։ Նկատեցէք սրա հառաչանքը։ Ինչպէս կուզենար նա երկնքից կրակ թափել տալ ժողովրդի գլխին... Կարող է մարդ այդքան կոյր լինել... Հեզութիւն և համբերութիւն են քարոզում, բայց սիրոյ Աստուծոյ առաջ մարդկային արիւն են թափում, մերձաւորին սիրել են քարոզում, բայց վռնդում են իրանց դռնից ութսունամեայ կոյր մուրացկանին։ Ազատութեան դէմ զայրոյթ են արտայայտում, բայց օտարներին լծումեն իրանց կառքերին անասունների փոխարէն։ Չեն կարողանում հասկանալ, թէ ինչպէս բնութիւնը ծնեց մի Յուդայ Իսկարիոտացի, բայց իրանք պատրաստ են տասն մանեթով Երրորդութիւնը վաճառելու։ Ո՛վ դուք, փարիսեցիներ, դուք, ճշմարտութեան դրամը նենգողներ... Խաչերի և սեղանների առաջ ծունր էք դնում, ծոմապահութեամբ տանջում էք ձեր մարմինը և կարծում էք թէ այդ միմոսութիւններով կը կուրացնէք նրա աչքերը, որին դուք ինքներդ ամենագէտ էք անանում... Այժմ կամենումեմ ես հպարտութեամբ խօսել։ Գնա և ասա այն բարձրապատիւ դատաստանին, որը կեանքի ու մահուան վճիռ է տալիս. Ես այն զոզերից չեմ, որոնք գիշերային խաւարից են օգտւում... Անտարակոյս մի ժամանակ ես կը կարդամ երկնային ցուցա-

կի մէջ իմ դատավճիռը, բայց երկնքի թշւառ ներկայացուցիչների հետ ես չեմ կամենում այլևս խօսել։ Սա՛ նրան, որ իմ արհեստը յատուցումն է և իմ զբաղմունքը՝ վրիժառութիւնը“։

Աւազակապետից յոյսը կտրելով, աբեղան դառնում է դէպի նրա խումբը, և ցոյց տալով կառավարութեան հրովարտակն, ասում է.

„Ուրեմն դո՛ւք լսեցէք, թէ ինչ է ասում ձեզ արդարադատութիւնը իմ միջոցով։ Եթէ դուք խոյն կը կապէք այդ դատապարտած չարագործին և կառավարութեան ձեռքը կը յանձնէք, ապա դուք բոլորովին ներում կը ստանաք։ Ձեզ, մոլորւած ոչխարներիդ սուրբ եկեղեցին կ'ընդունէ իւր ծոցը կրկնակի սիրով և ձեզանից իւրաքանչիւրի համար ճանապարհ կը բացւի դէպի պատւաւոր պաշտօնները։ Ուրեմն դէպի գործ։ Կապոտեցէք նրան և ամենքդ ազատ էք“։

Լսելով այդ առաջարկութիւնը, Կարլը ինքն իւր կուռը կապում է ծառից, որ աւազակները չը վախենան իրանից, և խնդրում է նրանց կապել իրան և յանձնել ում յարգն է։ Բայց աւազակները պատռում են կառավարութեան հրովարտակը և շպրտում աբեղայի երեսին ասելով.

„Գնա՛, և ասա՛ քեզ ուղարկող ատեանին, որ Մօորի բանակի մէջ ո՛չ մի հատիկ դաւաճան չ'կայ“։ Ապա ամենքը մերկացնելով սրերը հետեւում են Կարլին։

IX.

Ծերունու դերիշխանութիւնից ազատւելով, Ֆրանցը դարձաւ ամբոցի տէրը և ինքնիշխան հրամայողը։ Ամալիային ստանալու համար ըստ երևոյթին ճանապարհը հարթւած էր։ Հօր թաղման հանդէսը տօնում էր Ֆրանցը ուրախ խնջոյքով, որից խոյս տւաւ օրիորդը։ Ֆրանցը եկաւ նրա ետևից և սկսեց նախ մեղմութեամբ բացատրել նրան, թէ Ամալիան այսուհետև պիտի հնազանդ լինի և պատկանէ նրան։ Իսկ օրիորդը պատասխանեց, թէ ինքը երբէք չի դառնալ Կարլին սպանողի կինը։ Ֆրանցը սպառնաց բանտարկել նրան կամ վանքը ուղարկել։ Ամալիան այդ մասին ուրախութիւն յայտնեց. նա ցանկանում էր փակւել չորս պատերի մէջ, հեռու Ֆրանցի աչքից, և միմիայն իւր Կարլի մասին մտածել։ Ֆրանցը աւելի էլ սաստկացրեց իւր սպառնալիքները։ „Մակերիցդ բռնած քեզ եկեղեցի քարշ կը տամ. սրով դուրս կը քաշեմ բերանիցդ ամուսնական երդումը... քո ամօթխած հպարտութիւնը կը կոտրեմ իմ աւելի զօրեղ հպարտութեան միջոցով“։

Այդ խօսքը լսելով օրիորդը մի փառաւոր ապտակ հասցրեց Ֆրանցի երեսին։ Ֆրանցը կատաղելով փորձեց բռնութեամբ քարշ տալ նրան իւր հետ, բայց օրիորդը ճարպիկութեամբ խլեց Ֆրանցի կողքից կախւած դաշոյնը և յարձակ-

ելով Ֆրանցի վրա, դուրս փախցրեց նրան։

Այդ ժամանակ ներս մտաւ Հէրմանը, որը վաղուց յարմար րոպէ էր որոնում օրիորդի հետ խօսալու համար։ Հէրմանի խիղճը շարժւել էր. նա կամենում էր միայն երկու խօսք ասել, որպէս զի թէ իւր խիղճը հանգստացնէր և թէ օրիորդին ազատէր յուսահատութիւնից։ Ամալիան չէր կամենում լսել նրան. բայց Հէրմանին յաջողւեց վերջապէս լեզուից թռցնել, թէ Կարլը և ծերունի կոմսը կենդանի են։ Ամալիան լսեց միայն Կարլի անունը և ուրախութիւնից չփոթւած չը գիտէր ինչ անել։

X.

Չը նայելով որ աւազակային խումբը շրջապատւած էր զինւորներով, այնուամենայնիւ կարողացաւ նա խոյս տալ՝ չնչին կորուստ ունենալով։ Սպանւած էր Բոլէրը, Կարլի սիրելին, որին նա հազիւ ազատել էր կախաղանից։ Երեկոյ էր։ Կարլը իւր բանակով գտնւում էր մի ամուր տեղում, Դունայ գետի ափին։ Պառկել էր Կարլը մի ծառի տակին, ֆիզիկապէս յոգնած և հոգեպէս խորը վշտացած թէ Բոլէրի մահւան և թէ առհասարակ իւր անբնական կեանքի և գործունէութեան պատճառով։ Նա շատ լաւ գիտէր, որ ինքը չէ գտնւում պատշաճ ու մարդավայել ասպարիզի մէջ, որի համար նա ի բնէ

սիրտ և ընդունակութիւն ունէր։ Հանգամանքները ստիպել էին նրան դառնալ մի նշանաւոր աւազակապետ, բայց նա ինքն իրան չէր կարողանում ներել...

„Ցեսնում էք—ասում էր նա ինքն իրան—թէ որքան դեղեցիկ է բուսել ցորէնը։ Ծառերն էլ ահա ծանրաբեռնւած են առատ պտուղներով։ Խաղողի ճիթը մեծ յոյս է տալիս։ Ուրեմն գոնեայ այդ դէպքում թափած քրտինքը վարձատրւում է... Ինչու մարդուն յաջողում է այն, ինչոր նա մրջիւններից է ընդօրինակում, բայց չէ յաջողում այն, ինչով նա կամենում է աստւածներին նմանւել։ Ուրեմն այստեղ է նրա կոչման սահմանը... Եղբայր, ես ծանօթ եմ մարդկանց, նրանց մեղւական գործունէութեան և հսկայական ծրագիրներին, նրանց մկնային զբաղմունքին և աստւածային ձգտումներին, նրանց զարմանալի ընդունակութեան՝ բաղդ որսալու ասպարիզում։ Մէկը ապաւինում է իւր ձիու թռիչքին, միւսը՝ իւր էշի տունչին, երրորդը՝ իւր ոտներին։ Սա մի բազմաբովանդակ խաղարկութիւն է, որի մէջ ասպարէզ է գտնում մէկը իւր անմեղութիւնը, միւսը իւր հոգին՝ մի յաջող տոմսակ ձեռք բերելու յուսով։ Սա մի կատակերգութիւն է արտասուքի արժանի... Բայց տես, թէ ինչպէս փառահեղ կերպով մայր է մտնում արևը... Այդպէս է մեռնում հերոսը... Երբ ես

դեռ մանուկ էի, այդ էր իմ սիրելի ձգտումը՝ արևի պէս ապրել և արևի պէս մեռնել... Երանի թէ վերադառնար այն օրը... Այ՛, բարեկամներ, աշխարհը գեղեցիկ է, աշխարհը փառահեղ է... Իսկ ես այնպէս տգեղ եմ այդ գեղեցիկ աշխարհում, իսկ ես մի հրէշ եմ այդ փառահեղ երկրում... իմ անմեղութիւնը, անմեղութիւնը... Տեսէ՛ք. ամեն բան կենդանանում է գարնանային մեղմ ճառագայթներից. ինչո՞ւ միայն ես պիտի վիշտ գտնեմ երկնային ուրախութիւնների մէջ։ Ամենքը բաղտաւոր են, ամենքը միացած են խաղաղութեան հոգով։ Ամբողջ տիեզերքը մի ընտանիք է և վերևում մի հայր կայ... Բայց ես միայն հայր չունեմ... Միայն ես եմ արտաքսուած, ես եմ վռնդուած մաքուրների շարքից։ Ինձ համար միայն չկայ զաւակ կոչելու քաղցր իրաւունքը, սիրելիի քնքոյշ հայեացքը և բարեկամական գրկախառնութիւնը։ Մարդասպաններով շրջապատուած, երկաթեայ կապերով արատաւոր կեանքի հետ կապուած, աշխարհի երջանիկ ծաղիկների մէջ միայնակ մնացած... Ո՜հ, եթէ ես կարողանայի վերադառնալ մօրս արգանդը և նորից ծնուել որպէս մի չքաւոր երեխայ։ Ո՜չ, ես աւելի բան չէի կամենալ. բայց եթէ մի հասարակ բանտը դառնալ... Ո՜հ, դուք խաղաղութեան օրեր, ո՜հ, դուք շքեղ հովիտներ, ո՜հ, իմ մանկութեան

երջանիկ տեսարաններ... Դուք այլևս երբէ՛ք չէք վերադառնալու, երբէ՛ք, երբէ՛ք...

XI.

Նոյն երեկոյեան գալիս է Կարլի բանակը մի դեռահաս երիտասարդ՝ Կօսինսկի անունով։ Երիտասարդը հեռու տեղից եկել է՝ նրանց ընկերանալու համար, բայց Կարլը ընդդիմանում է նրան, խորհուրդ տալով իզուր չանբաղտացնել ինքն իրան։ Կարլը կարծում է, թէ Կօսինսկուն դէպի աւազակութիւն մղողը սնոտի փառասիրութիւնն է և թէ նա շատ թեթև կարծիք ունի աւազակային վտանգաւոր ասպարիզի մասին։ Բայց Կօսինսկու պատմածներից բոլորովին ուրիշ բան է դուրս գալիս։

Կօսինսկին Բոհէմիայի ազնուական էր։ Նրա կալուածներում ապրում էր մի հրեշտականման անարատ աղջիկ, որին սիրում էր երիտասարդ ազնուականը և արդէն նշանած լինելով որոշել էր պսակադրութեան օրը։ Հարսանիքից մի օր մնացած Կօսինսկուն անակնկալ ձերբակալում են և տանում իշխանական պալատը։ Նրա առաջ գնում են մի շարք կասկածաւոր նամակներ, որոնց իրը թէ նա է գրել, խլում են նրա սուրը և բանտարկում են նրան։ Մի ամիս բանտում մնալուց յետոյ Կօսինսկին անմեղ է յայտնւում, ազատւում է բանտից և յետ ստանում սուրը։

նա յաղթական ուրախութեամբ թռչում է իւր կալուածքը. բայց ո՜հ հիասթափութիւն... Նրա Ամալիան չկայ... Կէս գիշերին տարել են օրիորդին, ոչոք չը գիտէ թէ ուր... և այն օրից յետոյ ոչ ոք չէ տեսել նրան։ Երիտասարդը գնում է քաղաք, շատ հարցուփորձ է անում, բայց ոչինչ չէ կարողանում իմանալ։ Վերջապէս նա սկսում է մուտ գործել պալատական շրջանները և պալատի մի գաղտնի վանդակապատից օրիորդը մի տոմսակ է նետում երիտասարդին, որից նա ամեն բան տեղեկանում է։ Երիտասարդին անիրաւ կերպով ձերբակալել տուող իշխանը առաջարկել է օրիորդին ընտրել երկու բանից մէկը՝ այսինքն կամ տեսնել Կոսինսկու մահը, կամ թէ դառնալ իշխանի սիրուհին, որ Կոսինսկին ազատուի։ Օրիորդը բարուք է համարել իւր անձնը կորցնել, քան թէ սիրելիի մահը տեսնել։ Նամակը ստանալուց յետոյ Կոսինսկին փորձում է սպանել իշխանին, բայց փորձը չէ յաջողւում և նա նորից ձերբակալւում է։ Ապա իշխանը, ի նշան առանձին ողորմածութեան, որոշում է միայն զրկել երիտասարդին պատից ու բոլոր իրաւունքներից և արսորել իւր երկրից։ Կոսինսկու հարստութիւնը անցնում է, իբր վարձատրութիւն, գործը գլուխ բերող մինիստրի ձեռքը։ Ամալիան մնում է առ-միշտ բանտարի ճանգերում։ Իսկ իմ՝ Կոսինսկին այլևս ուրիշ ճանապարհ չը

տեսնելով, որոշել է անձնուէր անդամ դառնալ Կարլի խմբին։

Կարլի սիրտը բոլորովին տակն ու վրա է լինում լսելով Կոսինսկու Ամալիայի դրութեան մասին... Արդեօք համանման դրութեան մէջ չէ՞ Կարլի Ամալիան... Ի՞նչ է անում նա այժմ... Նա ում ճանգերի մէջ է տառապում... Եւ մի՞թէ Կարլը չէ կարող օգնութեան հասնել նրան... Յուզած աւազակապետը խկոյն ոտքի է կանգնում և հրամայում խմբին առաջ շարժուել... Ոչ ոք դեռ չը գիտէ, թէ ուր են գնում, բայց ինքը Կարլը լաւ գիտէ...

XII.

Մի շաբաթից յետոյ մենք գտնումենք Կարլին հայրական ամրոցի գոնեերի առաջ կանգնած։ Նա ուղարկեց Կոսինսկիին ներս, որ յայտնէ իրը թէ Մէկլէնբուրգցի կոմս Բրանդի գալուստը։ Կոսինսկիի բացակայութեան ժամանակ Կարլը խորասուզուեց իւր վշտերի մէջ.

„Բարև՜ քեզ, հայրենական տուն, հայրենի երկինք, հայրենի արև... Բարև՜ ձեզ, դաշտեր, բլուրներ, գետեր և անտառներ... Որքէ՛ս ախորժելի է հայրենի լեռների օդը... Բ[illegible] աստեղծական աշխարհ... Դանդ ա՛ռ, Կարլ, դու գտնումես սուրբ տաճարի մէջ։ Ահա ծիծեռնակների համար շինած տնակը, ահա այգու փոքրիկ դուռը, ահա

ցանկապատը... Ահա այն հովիտը, ուր դու փոքրիկ զինուորներին վարժեցնում էիր... Այն ժամանակ դու երջանիկ էիր... ուրախ էիր... Իսկ այժմ... Քո բոլոր ծրագիրները խորտակւած են։ Այդ ամրոցում պիտի դու դառնայիր մի ազնիւ մարդ... Այստեղ պիտի դառնայիր քո ժողովրդի սիրելին... Այստեղ պիտի Ամալիայի դաւակները վերանորոգէին քո մանկական պատկերը... Բայց շար ոգին ծուռ նայեց քո վրա... Եւ ինչու համար ես վերադարձել դու այժմ... Գնա, հեռացիր... Բայց ո՛չ, Ամալիային չը տեսնել... ոչ մի հայեացք չը գցել նրա վրա, երբ միայն մի պատ է բաժանում ինձ նրանից... Ո՛չ, ես պիտի տեսնեմ, պիտի տեսնեմ նրան։ Ո՜հ, հայր, հայր, քո որդին մ'օտ է քեզ... Հեռու՛ ինձնից մահւան պատկերներ... Հեռու, գարշելի արեան երևոյթ... Գոնեայ մի՛ ժամ ազատ թողէք ինձ... Հայր, Ամալիա, Կարլը մ'օտ է ձեզ"...

Կոմս Բրանդին ընդունում են ներս։ Կարլը անմիջապէս աշխատում է ստանալ իրան հարկաւոր տեղեկութիւնները, բայց զգուշանում է, որ իրան չը ճանաչեն։ Ահա անցնում է Ամալիայի հետ միասին պատկերազարդ սրահով։ Նա որոնում է պատկերների մէջ ծերունի Մ'օօրին, որը իբր թէ իւր հին բարեկամն է եղել։ Գտնելով նրա պատկերը, Կարլը ցրտասաւալի աչքերով ծածկ[illegible]ար ներողութիւն է խնդրում պատկերից,

իսկ Ամալիային դառնալով գովում է ծերունուն և գերազանց մարդ է անւանում նրան։ Ապա նկատելով իւր պատկերը, որ կախւած էր հօր աջ կողմում, հարցնում է Ամալիային, թէ ում պատկերն է նա։ Իսկ Ամալիան խոյս տալով այդ պատկերից մատնացոյց է անում ձախ կողմի պատկերի վրա, ասելով թէ նա ծերունու որդին է։ Բայց Կարլը կրկին հարցնում է աջ կողմինի մասին։ Ամալիան, չը կարողանալով զսպել արտասուքը, փախչում է։ "Նա ինձ սիրում է— ասում է Կարլը ինքն իրան ճմլուած սրտով— սիրո՛ւմ է դեռ ինձ։ Նա չփոթւեց իւր ամբողջ էութեամբ, ակամայ վազեցին արտասուքի կաթիլները նրա թշերի վրայով։ Նա սիրո՛ւմ է ինձ... Թշւառակա՛ն, մի՛թէ դու արժանի ես Ամալիային"...

Կարլը վշտացած հեռանում է սրահից։ Այդ ըստ էին յայտնւում է Ֆրանցը՝ մտքերի մէջ խորասուզւած։ Նա խիստ անհանգիստ է հիւրի գալուց յետոյ։ Ամալիան, որ սովորաբար ոչոքի երեսին նայել չէ ուզում, շատ մեղմ է հիւրի հետ։ Ո՞վ է այդ մարդը, չ'լինի՞ թէ Կարլը ինքն է... Ֆրանցը կանգ է առնում եղբոր պատկերի առաջ, խորը դիտում է և աւելի ու աւելի սկսում է կարծել, թէ հիւրը Կարլն է։ Ուրեմն ինչ անել... Մի՛թէ Ֆրանցը պիտի միանգամից կորցնէ իւր երկար ջանքերի արդիւնքը... Ո՛չ. ինչպէս կարելի է... Նա արդէն այնքան առաջ է գնացել

իւր չարագործութիւնների մէջ, որ այլևս յետ դառնալը անհնար է։ Որեմն դէպի յառաջ... Բազմաթիւ չար գործերին դժուար չէ մէկն էլ աւելացնել։ Կարլն է, թէ ուրիշն է այդ անակնկալ հիւրը, նա պիտի մեռնէ յանուն Ֆրանցի հոգեկան հանգստութեան։ Բայց ինչպէս իրագործել այդ դիդաւորութիւնը։

Նա իսկոյն կանչում է ծերունի Դանիէլին, որը համարեա իւր ամբողջ կեանքում հաւատարմութեամբ ծառայել է Մ՝ օրի ամրոցում։ Դանիէլը բարի մարդ է և քրիստոնէական զգացմունքով ու հանգիստ խղճով սպասում է իւր դերեզմանին։ Իսկ Ֆրանցը որոշել է նրա ձեռքով վերջ տալ Կարլի կեանքին։ Բայց ի հարկէ Դանիէլը հեշտութեամբ չի յանձն առնիլ այդ գործը։ Ուստի Ֆրանցը զանազան խորամանկութիւններ գործ դնելով, նախ փորձում է նրան, թէ արդեօք կաշառուած չէ նրա կողմից։ Եւ վստահանալով, որ այդպիսի բան չկայ, Ֆրանցը հրամայում է, պահանջում է, որ կոմսը միւս օրը չը գտնուի կենդանի մարդկանց շարքում։ Դանիէլը սարսափում է. նա ոչ մի կերպով չէ կարող այդպիսի յանցանք գործել։ Ֆրանցը սկսում է սպառնալ զարհուրելի կերպով։ Դանիէլը պիտի երկու բանից մէկը ընտրէ. կամ պիտի կատարէ Ֆրանցի հրամանը և հանգիստ ու խաղաղ կեանք անցուցանէ, կամ թէ պիտի մինչև մահը ճգնէ ամենասոր վիրապում, ուր ստիպուած պիտի լինի սովածութիւնից սեփական ոսկորները կուծել։ Անճարացեալ յանձն է առնում ծերունին՝ կատարել Ֆրանցի հրամանը, յուսալով որ մինչև միւս օր գուցէ մի ուրիշ ելք կը գտնէ։ Երբ Դանիէլը դուրս գնաց, Ֆրանցը իւր սովորութեան համեմատ աշխատում էր զանազան սոփեստութիւններով արդարացնել իրան։ „Մարդը յառաջ է գալիս տիզմից—ասում է նա—և որոշ ժամանակ տիզմի մէջ թաւալուելով, տիզմ է յառաջ բերում և յետոյ կրկին ինքն էլ տիզմ է դառնում... Այդ է մարդկային կոչման ամբողջ երգը... Եւ այդպէս, բարի ճանապարհ, յարգելի եղբայր։ Թոքախտաւոր ու կաթուածահար բարոյագէտը թող քարոզէ պառաւ պառնիկներին և տանջէ զառամեալ վաշխառուներին մահուան անկողնում... Իսկ ինձ համար ինչ նշանակութիւն ունին այդ բարոյագէտները“...

XIII.

Ֆրանցի հարցուփորձը Դանիէլին էլ կասկածի մէջ է դնում, թէ գուցէ իսկապէս այդ կոմսը Կարլն է։ Դանիէլը սկսում է լաւ զննել կոմսին և գտնում է, որ նրա դէմքի մի քանի գծերը յիշեցնում են Կարլին։ Բայց ինչպէս իմանալ ստոյգը։ Դանիէլը մտաբերեց, թէ ինչպէս երեխայ ժամանակ Կարլի աջ ձեռքը վիրաւոր-

ւել էր և վէրքի նշանը մնացել էր առ միշտ։ Ծերունին մօտեցաւ կոմսին և խնդրեց թոյլ տալ համբուրել նրա ձեռքը։ Կոմսը սկզբում ընդդիմացաւ, բայց վերջապէս դիջեց ծերունու աղերսանքին։ Դանիէլը նկատելով վէրքի նշանը, իսկոյն չոքեց նրա առաջ և բացականչեց. „Իմ սիրելի, բարի Կարլ“։ Կարլը այլևս չը կարողացաւ թաղցնել։ Ապա նա սկսեց Դանիէլից տեղեկութիւններ հարցնել։ Ծերունին բացատրեց, որ Ամալիան շարունակում է սիրել նրան և միշտ տանջւում է նրա վշտով։ Ապա մի ակնարկով հասկացրեց Կարլին, որ նրա մահւան սուտ լուրը Ֆրանցն է տարածել և թէ ինքն աւելի յօժարութեամբ կը նստէ խոր վիրապում, քանթէ սպանութիւն կը գործէ։ Կարլի աչքերը յանկարծակի բացւեցին։ Նա սկսեց հասկանալ, որ ինքը սխալւած է եղել հօր աններողամտութեան վերաբերմամբ, թէ այստեղ մի խաբէյութիւն կայ, մի սարսափելի նենգաւոր խարդախութիւն կայ, որի հերոսը ուրիշ ոչ ոք է, բայց եթէ Ֆրանցը։ Հիմա ինչ անէ Կարլը, սպանէ՞ եղբօրը... Ո՞չ, նա այդ չի անիլ։ Նա պիտի իսկոյն հեռանայ ամրոցից, որ ստիպւած չլինի այդպիսի յանցանք գործել։ Կարլը հրամայում է Կօսինսկիին ձիերը պատրաստել և սպասել իրան. նա կամենում է վերջին անգամ տեսնել Ամալիային։

Ամալիան մէնակ նստած պարտիզում ալեկոծւում է։ Նա չը գիտէ, թէ ով է այդ կոմսը, բայց սրա աչքերի և ձայնի մէջ ինչոր բան կայ, որ քաշում է Ամալիային դէպի իրան։ Երբ նա հարցրեց. Ամալիա, դու լաց ես լինում—Ամալիայի աչքին կեանքը նորից կենդանացաւ, բնութիւնը նորից թարմացաւ... Կոմսի ձայնի մէջ հնչեց անցած սիրոյ նորոգւած ձայնը, դարնանային ծաղիկները նորից բուրեցին, և Ամալիային թւաց, թէ ինքն ընկած է իւր Կարլի պարանոցին։ Ահա այդ քաղցր զգացմունքները վշտացնումեն անբաղդ օրիորդին։ Կարծես թէ նա սիրում է այդ օտարականին... „Լռիր... լռիր, անհաւատարիմ սիրտ։ Ո՞չ, ոչ, հեռու իմ հոգոյ միջից յանցաւոր պատկերը. ես չեմ խախտիլ իմ երդումը. Կարլն է իմը։ Հեռու իմ սրտից, դաւաճան ցանկութիւններ։ Այն սրտի մէջ, ուր Կարլն է բնակւում, ուրիշ ոչ ոք չէ կարող տեղ գտնել։ Սակայն իմ հոգին ձգտումէ շարունակ դէպի այդ օտարականը։ Նա հարցրեց. Ամալիա, դու լաց ես լինում։ Այո, ես պիտի խուսափեմ, պիտի փախչեմ նրանից, երբէք պիտի չը նայեմ այդ օտարականի աչքերին։

Բայց ահա նա մտաւ պարտէզ։ Ո՞ւր փախչել։ Օրիորդը շտապով հանում է ծոցից Կարլի պատկերը և աչքերը սևեռում է պատկերի վրա, որպէս զի սիրտը չը մոլորւի։ Կարլը կամենում է տեսնել, թէ այն ինչ պատկեր է, բայց օրի-

որդը թագցնելով սկսում է գովել իւր սիրելին, պատմում է թէ ինչպէս նա վարդ էր քաղում Ամալիայի համար, ինչպէս ընկնում էր նրա վզովը և համբուրում նրան... Կարլը պատմումէ, թէ ինքն էլ մի այսպիսի սիրուհի է ունեցել, որից սակայն վաղուց հեռացած է։ „Եթէ դուք իմանայիք—հարցնում է Կարլը—թէ Ձեր սիրելին այժմ աւազակ է, մարդասպան է, ինչ կանէիք այն ժամանակ“։ Ամալիան պատասխանում է, թէ իւր սիրելին չէ կարող այդպիսի մէկը լինել, որովհետև նա, իւր սիրելին, աստուածութեան արտացոլութիւնն է, իսկ աստուածութիւնը սէր և գթութիւն է... հաւատացնում է, թէ նա նոյն իսկ մի ճանճին տանջանք չի պատճառիլ, թէ իւր սիրեցեալի հոգին այնքան հեռու է արիւնոտ մտքերից, որքան պայծառ օրը խաւար գիշերից։ Կարլը, տեսնելով որ ինքը շատ հեռու է այժմ Ամալիայի իդէալը լինելուց, շտապով վեր է կենում, մի վշտալի լուռ հայեացք է գցում Ամալիայի վրայ և վճռական կերպով հեռանում է։

XIV.

Կարլի խումբը իջևանել էր ամրոցի շրջակայքում գտնուող անդառում։ Գիշեր էր։ Նրանք սպասում էին աւազակապետի վերադառնալուն, բայց նա ուշանում էր։ Կարլի բացակայութիւնից օգտուելով Զպիգելբերգը կամենում էր իրա-

գործել իւր վաղուցայ ծրագիրը, այսինքն ինքն դառնալ խմբի հրամանատարը։ Նա մի կողմ տանելով Բայմանին, աշխատում էր համոզել որ իւր հետ միասին գնան և ճանապարհին ծածուկ սպանեն Կարլին։ Բայց Զվեյցերը հասկանալով Զպիգելբերգի չար դիդաւորութիւնը, տեղն ու տեղը սպանեց նրան։ Զուտով եկաւ Կարլը և տեղեկանալով պատահած դէպքի մասին, ասաց. „Սա էր, որ ներշնչեց ինձ այն սարսափելի միտքը։ Այժմ սրա մահը նշան է, որ ամեն բան շուտով վերջանալու է։ Ծառերի տերևները թափւում են. աշունը մօտ է“։ Ապա Կարլը ազատ թողեց աւազակներին, որ քնեն ու հանգստանան։ Իսկ ինքն արթուն մնաց և ինչոր մտքեր էր անում...

„Որպէս մութն է բոլորը—ասում էր նա—որպիսի խառն լաբիրինթոս... Ոչ մի առաջնորդող աստղ չկայ, որ վկայ լինէր, թէ ինչպէս դադարեց այդ շունչը... Մթթէ կեանքը միայն տիկնիկների մի խաղ է։ Բայց ինչու համար է այն ջերմ տենչանքը դէպի երջանկութիւն, ինչու համար է անհասանելի կատարելագործութեան իդէալը, չը վերջացրած ծրագիրների յետաձգումը, եթէ ատրճանակի շնչին ճնշումը հաւասարացնում է խմաստունին յիմարի հետ, քաջին երկչոտի հետ, ազնիւին խարդախի հետ։ Քանի որ անշունչ բնութեան մէջ մի այնպիսի աստուածային ներդաշնակութիւն է տիրապետում, ինչու պիտի բա-

նական բնութեան մէջ իշխէ անհամերաշխութիւնը։ Ժամանակը և յաւիտենականութիւնը շղթայած են իրար հետ մի հատիկ վայրկեանի միջոցով։ Ո՜հ, դու զարհուրելի բանալի, որ կողպում ես իմ ետեւից կեանքի բանտը և բացում ես իմ առաջ մշանջենաւոր գիշերի շրջանը. ասա՛ ինձ, ո՜հ ասա՛ ինձ, ո՞ւր ես կամենում տանել ինձ.։. Եւ մի՞թէ ես պիտի մեռնեմ այն պատճառով, որ վախենամ տանջալի կեանքից... Պիտի թո՞ղ տամ ես, որ թշուառութիւնը յաղթող հանդիսանայ իմ վրա։ Ո՜չ, ես կամենում եմ համբերել... Թող ինքը տանջանքը ընկճի իմ հպարտութեան առաջ... Ես կամենում եմ գործը մինչև վերջը տանել, տեղ հասցնել“...

Այդ խորհրդաւոր բոպէին Կարլը յանկարծ նկատում է, որ մի մարդ կամաց գալիս է անդառի միջով։ Եկողը Հէրմանն էր, որ մօտենալով վիրապին սկսեց դուռը ծեծել։ Ներսից մի հարցական ձայն լսեց։ Հէրմանը յայտնեց իւր ով լինելը և վանդակի արանքով տաւ մօտեցող ձայնին մի կտոր հաց։ Երբ նա կամենում էր հեռանալ, Կարլը մօտեցաւ նրան և հրամայեց կանգնել։ Հէրմանը սարսափած, կարծելով թէ խօսողը Ֆրանցն է, սկսեց ներողութիւն խնդրել։ Նրա խօսքերը կասկած գարթնեցրին Կարլի սրտում։ Նա վերցրեց մի երկաթեայ գործիք և դուռը կոտրելով դուրս բերաւ բանտարկուածին և

զարմանքով լսեց հօր ձայնը։ Կարլը մի բոպէ ապշած էր և կարծում էր թէ իւր առաջ կանգնած է հօր ուրուականը, որը դուրս է եկել գերեզմանից։ Բայց զառամեալ կոմսը, որը խկապէս դիակի էր նմանում, բացատրեց որ ինքը երբէք թաղուած չէ եղել, այլ նրա փոխարէն թաղել են միայն մի շուն։ Ֆրանցը զգել տալով կիսամեռ հօրը խոր վիրապի մէջ, խիստ կերպով պատուիրել է Հէրմանին, որ սովամահ անելով մեռցնէ նրան։ Բայց Հէրմանը կարողացել է խաբել Ֆրանցին և ամենայն օր կէս գիշերին մի կտոր հաց բերելով, կարողացել է մի կերպ պահել ծերունու կեանքը։ Այդ սարսափելի պատմութիւնը լսելով, Կարլը բոլորովին կատաղեց և ատրճանակ արձակելով իսկոյն զարթնեցրեց ընկերներին։ „Եկէք—բացականչեց նա—ու տեսէք... Որդին հօրը սպանել է... Ո՜չ, սպանելը շատ չնչին բան է... Որդին հօրը խողխողել է, կախաղան է բարձրացրել, խայտառակել է, որդին իւր ուշաթափուած հօրը գլորել է վիրապի մէջ... ենթարկել է նրան ցրտի, սովի, ծարաւութեան... Սա իմ հարազատ հայրն է. ես պիտի խօստանամ այդ“։

Կարլը երդւում է, որ Ֆրանցը անպատճառ պիտի պատժւի, որ նրա արիւնը պիտի թափւի հօր ոտների տակ։ Նա հրամայում է Ջվէյցէրին՝ իւր խմբով յարձակւել ամրոցի վրա և կենդանի

բռնել Ֆրանցին և բերել իւր մօտ։ Ձվէյցէրը խօսք է տալիս կամ վերադառնալ Կարլի մօտ Ֆրանցի հետ միասին, կամ թէ բոլորովին չը վերադառնալ։

XV.

Կէս գիշերը արդէն անցել է։ Մօտի ամբոցում ամենքը քնած են և բոլոր ճրագները հանգած։ Միայն Ծերունի Դանիէլն է որ զարթուն մնալու պատճառ ունի։ Նա չէ կատարել Ֆրանցի յանձնարարութիւնը, ուստի միւս օրուանից սպասում է նրան մի զարհուրելի կեանք գետնափոր բանտում։ Բայց յանուն որ իրաւունքի։ Ծերունին իւր ամբողջ կեանքում հաւատարմութեամբ ծառայել է։ Իսկ այժմ, երբ նրանից վատ գործեր են պահանջում, նա իրան պարտաւոր չէ համարում մնալ ծառայութեան մէջ և որոշել է սուս ու փուս հեռանալ։ Եւ ահա երբ ամենքը հանգիստ քնած են, նա վերցնելով իւր շնչին կապոցը և մի փոքրիկ լապտեր, մնաս բարև է անում իւր մաքրած սրահներին։ Այդ միջոցին սարսափած մօտ է վազում Ֆրանցը գիշերային հանդերձի մէջ։

Ֆրանցը այլևս հանգիստ քուն չունի։ Նրա բոլոր ծրագիրները խորտակելու վրա են։ Կարլը եկաւ և միանգամից անյայտացաւ։ Ֆրանցը լաւ բան չէ սպասում այդ դէպքից։ Նա համոզուած

է, որ վտանգի ժամանակ ոչոք չի պաշտպանել իրան, որովհետև բոլորն էլ այրուած սիրտ ունեն։ Իսկ իւր հոգոյ խորքերում Ֆրանցը զգում է, որ ինքը մի զարհուրելի չարագործ է և որ իւր սոփեստական դատողութիւնները իսկապէս ոչ մի հաստատ հիմք չունեն։ Նա մի սարսափելի երազ է տեսել այս գիշեր։ Հազիւ երազից զարթնած նրա ականջին հասել է ինչոր ձիերի ոտնաձայն և զէնքերի շառաչիւն, բայց կարծում է, որ այդ բոլորը հիւանդ երևակայութեան արդիւնք է։ Այնուամենայնիւ նա սարսափում է, տանջւում է և չը գիտէ ինչպէս հանգստացնել իւր սիրտը։ Նա պատմում է երազը Դանիէլին և պահանջում է, որ ծերունին ծիծաղէ այդ յիմար երազի վրա։

„Երազումս տեսայ—ասում է նա—որ մի փառաւոր հացկերոյթից յետոյ ես պառկած եմ խոտի վրա, մեր այգում և իմ սիրտը շատ լաւ տրամադրութեան մէջ է։ Յանկարծ ես լսեցի մի ահռելի որոտմունք. սարսափելով վեր թռայ և տեսայ, որ ամբողջ հորիզոնը բոցավառուած է և լեռները, քաղաքները, անտառները հալւում են մոմի պէս, իսկ զառացող փոթորիկը ալեկոծում է ծովը, երկինքը և երկիրը։ Այդ ժամանակ լսեց պղնձեայ փողի ձայնը, որ ասում էր. Ո՞վ երկիր, տուր քո ննջեցեալները, ո՞վ ծով, տուր քո ննջեցեալները։ Եւ ահա ամայի անապատը սկսեց ճայթճայթել և դուրս գցել իւր միջից

գանգեր, ծնօտներ և ոտներ, որոնք միանալով կազմում էին մարդկային ամբողջ մարմիններ։ Ես վեր նայելով նկատեցի, որ կանգնած եմ որոտալի Սինայի ստորոտում և ինձնից վերը մի բազմութիւն և ինձնից ներքև նոյնպէս։ Իսկ լեռան գագաթին երեք բոցավառ աթոռների վրա երեք հոգի էին նստած, որոնց հայեացքից փախչում էին բոլոր արարածները։ Եւ ահա վեր կացաւ մէկը, որ աստղալից գիշերի էր նմանում և իւր ձեռքին ունէր մի կնիքաւոր երկաթեայ մատանի, որը բռնելով արևելքի և արևմուտքի մէջ ասաց. յաւիտենականութիւն, սրբութիւն, արդարութիւն։ Կայ միայն մէկ ճշմարտութիւն, միայն մէկ առաքինութիւն։ Վայ, վայ, վայ կասկածող որդնին։ Ապա յառաջ եկաւ երկրորդը, որ պահած էր ձեռքին մի փայլուն հայելի, որը բռնելով արևելքի և արևմուտքի մէջ՝ ասաց. Այդ հայելին ճշմարտութիւն է. կեղծաւորութիւնը և գիմակաւորութիւնը չեն կարող կանգուն մնալ։ Զարհուրեցի ես նայելով հայելու մէջ, ուր երևում էին օձերի, և վագրների և բորենիների դէմքեր։ Յետոյ վեր կացաւ երրորդը, որը ձեռին ունէր պղնձեայ կշէռք, որը բռնելով արևելքի և արևմուտքի մէջ, ասաց". Մօտ եկէք, ով Ադամի զաւակներ, ես կշռելու եմ ձեր մտածմունքները իմ բարկութեան կշէռքով և ձեր գործերը իմ զայրոյթի կշռաքարերով։

Որքան էլ Ֆրանցը պահանջում էր, որ Դանիէլը ծաղրէ իւր երազը, այնուամենայնիւ ծերունին ծաղրելու փոխարէն սարսափում էր և պնդում էր, թէ Ֆրանցը տեսել է վերջին ահեղ դատաստանը։ Ֆրանցը ի ներքուստ սարսափ զգալով հրամայում է կանչել պատօրին։ Իսկ մինչև պատօրի գալը նա աշխատում է ինքն իրան հանգստացնել։

„Ո՞վ կարող է հաստատել, որ աստղերից վերը մի աշք կայ... Մթթէ աստղերից վերը մի վրիժառու կայ։ Ո՞չ, ո՞չ... Այո՞, այո՞... Եւ ես էլնց այս գիշեր պիտի ներկայանամ այդ վրիժառուի առաջ... Ո՞չ, ասում եմ ես... Ամայի՜, դաղարկ, խո՞ւլ է վերը աստղերից դէնը... Իսկ եթէ որև է բան լինի... Ո՞չ, ո՞չ, ոչինչ չկայ... Ես հրամայում եմ, որ ոչինչ չլինի... Սակայն եթէ լինի՜"...

Մինչդեռ այդպէս ինքն իրան տանջում էր Ֆրանցը, գալիս է պատօրը, որի աշխատանքը նոյնպէս զուր է անցնում։ Ֆրանցը արդէն մօտ է յուսահատ խելագարութեան։ Տարաբաղտաբար նոյն րոպէին ստանում է նա մի շարք տխուր տեղեկութիւններ։ Ամալիան փախել է, ձիաւորների մի գունդ թափելով ամրոցի վրա, մահ, մահ է աղաղակում։ Ֆրանցը վերջնականապէս գլուխը կորցնելով, խելագարւած, ողբում է իւր վերջին բոպէները, և կտրելով իւր գլխարկի ոսկէթելը,

նրանով ինքն իրան խեղդում է։ Այդ միջոցին ներս է մտնում Զվէյցէրը իւր խմբով և Ֆրանցին մեռած տեսնելով, ատրճանակով սպանում է ինքն իրան, որովհետև խօսք է տուել Կարլին՝ առանց Ֆրանցի չը վերադառնալ։

Զվէյցէրի ընկերները յետ դնալով, պատմում են պատահած դէպքի մասին։ Կարլը գոհ է։ Իսկոյն յատնւում է նոյնպէս Ամալիան և ընկնում է սիրելիի վզովը։ Նրանք գրկախառնւում են։ Բայց աւազակները յիշեցնում են Կարլին նրա ուխտը։ Ծերունին չը կարողանալով դիմանալ զարհուրելի տեսարանին, տեղն ու տեղը հոգին աւանդում է։ Իսկ Ամալիան տեսնելով, որ Կարլը չի քանդիլ իւր ուխտը, խնդրում է նրան սեփական ձեռքով սպանել սիրուհուն։ Կարլը երկար տատանուելուց յետոյ վերջապէս ստիպւած է լինում կատարել սիրուհու խնդիրքը։ Իսկ ինքը, Կարլը, փոխանակ ինքնասպանութիւն գործելու, որոշում է իւր արիւնը ծախել բարի նպատակով։ Նա լսել է, թէ կառավարութիւնը խոստացել է հազար ոսկի տալ այն մարդուն, որը Կարլին կենդանի կը յանձնէ նրա ձեռքը։ Եւ ահա Կարլը գնում ու յանձնւում է մի աղքատ մշակի իրաւունքին, որը տասնումէկ երեխայ ունէր, և խնդրում է նրան տանել իրան հարկաւոր տեղը և հազար ոսկին ստանալ։

ՊԵՏ ՀԱՍԼԻՍԿԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-ԱԽՄ СССР
Մեսրոպ Մաշտոցի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0666585
ՀՀ Ազգային գրադարան
NL0666584
ՀՀ Ազգային գրադարան
NL0666583
ՀՀ Ազգային գրադարան
NL0666582